ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 2, 1960 Общественные науки

Ժ. Ֆ. Ճշմարիտյան

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԿՈՂՄՆԱԿԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Նախադասության կողմնակի անդամները սովորաբար հանդես են գալիս դերբայական դարձվածի կազմի մեջ, որպես դարձվածը կազմող դերբայի լրացումներ։ Սակայն դերբայական դարձվածի ոչ բոլոր անդամներն են համարվում կողմնակի. դերբայական դարձվածի կազմի մեջ մտնող անդամների կողմնակիությունը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով։

Դերբայական դարձվածը նախադասության մեջ կարող է հանդես գալ նախադասության բոլոր անդամների պաշտոններով, բացի ստորոգյալից, որը բնական է, քանի որ ստորոգյալի պաշտոն կատարելու համար անհրաժեշտ ստորոգման ֆունկցիան դերբայը չի կարող կատարել։ Ամբողջ դերբայական դարձվածը, որքան էլ ընդարձակ լինի, կարող է կատարել նախադասության միայն մի անդամի պաշտոն, և քանի որ նրա՝ նախադասության ինչ անդամ լինելը որոշվում է դերբայի դերով, ապա պարզ է, որ դարձվածի մյուս անդամները՝ կողմնակի, թե ոչ կողմնակի, առանձին կշիռ ունենալ չեն կարող։ Սա ընդհանրապես։ Սակայն դերբայական դարձվածի անդամների կողմնակի լինել չլինելու հարցը հիմնականում կապված է մի այլ հանգամանքի հետ։ Ինչ պաշտոն էլ կատարելիս լինի նախադասության մեջ դերբայը (ենթակայի, խնդրի և այլն), ըստ իր խոսքի մասային էության կարող է ունենալ բայական լրացումներ՝ խնդիրներ ու պարագաներ, ինչպես նաև ենթակա։ Այդպիսի լրացումներ սովորաբար ունենում է միայն ստորոգյալը, այսինքն՝ ենթական, խնդիրները ու պարագաները սովորաբար վերաբերվում են միայն ստորոգյալին։ Եվ քանի որ նախադասության բուն գործողությունն արտահայտվում է ստորոգյալի միջոցով, հետևաբար նախադասության բուն ենթական, խնդիրները ու պարագաները ստորոգյալին վերաբերվողներն են, իսկ նախադասության համար ոչ հիմնական, երկրորդական գործողություն արտահայտող դերբայի ենթական, խնդիրները ու պարագաները կողմնակի են։

Նախադասության կողմնակի անդամ արտահայտությունը հայերենում առաջին անդամ օգտագործել է պրոֆ. Արեղյանը («կողմնակի ենթակա»), բայց նա «կողմնակի» տերմինը գործ է ածում նաև այլ իմաստով, օրինակ՝ լրացման լրացումներին անվանում է «կողմնակի լրացումներ»։

Այս կատեգորիայի պարզորոշ և ճշգրտված բնորոշումը տվել է պրոֆ. Սևակը. «Դերբայական դարձվածի ենթական, խնդիրները ու պարագաները նախադասության կողմնակի անդամներ են և կոչվում են կողմնակի ենթակա, կողմնակի խնդիր, կողմնակի պարագա»[1]։ Սակայն նախադասության կողմնակի անդամների սահմանազատումը դերբայական դարձվածի մյուս անդամներից, այսինքն՝ թե դերբայական դարձվածի անդամները երբ կարող են համար-

---

[1] *Հայոց լեզվի շարահյուսություն, 1955, էջ 66։*

վել նախադասության կողմնակի անդամ, երբ ոչ — դեռևս կարոտ է պարզաբանման։

Նախ պետք է նշել, որ դարձվածը կազմող դերբայն ինչ պաշտոնով էլ որ հանդես գալու լինի՝ կարող է առնել հիմնականում միայն բայական լրացումներ։ «Վահեն գլուխը կորցրեց. միթե՞ չէր հանդիպելու մեկը, որ օգներ իրեն ճիվանդին տուն փոխադրել» (ԱԱՔ, էջ 4)։ «Երբեմն նրանք ոչ թե վազում, այլ սլանում էին հողմի պես՝ բաշները քամուն տված...» (ՍՋՊԹ, էջ 241)։ «Ամբողջապես ողողված քրտինքով՝ դժգոհ ու զայրացած Վահեն նորից բարձրանում էր վագոն» (ԱԱՔ, էջ 4)։ «...Գլուխը բերևակի ուսերին թեքած ուշադիր լսում էր հորեղբոր և հյուրի տաք վիճաբանությունները» (ՇՔ, էջ 258)։ «Ես չեմ հավատում դրսից եկած անհրաժեշտությանը» (ԱԻԵ, էջ 304)։ «Մի առավոտ չկարողացավ ժամանակին զարթնել» (ՆՋՀ, էջ 4)։ Ընդգծված դերբայական դարձվածների մեջ որպես դերբայի լրացում հանդես են եկել խնդիրներ (հիվանդին, բաշները, քամուն, քրտինքով, ուսերին) և պարագաներ (տուն, ամբողջապես, թեբևակի, դրսից, ժամանակին)։ Ինչպես հայտնի է, դերբայը կարող է ունենալ նաև իր ենթական (կողմնակի)։ «Ջրի բերածը տանք նորից ջրին» (ՎՏԵԺ, հ. 1-ին՝ էջ 360)։ «Նրանք վրդովված էին Հաշիմի մեղմանալուց» (ՇԵԼԺ, հ. 2-րդ, էջ 94)։ «Առհասարակ կանանց և երեխաների ասածը Սալոմեն ավելի լավ էր հասկանում...» (ՆԴԵ, հ. 2-րդ էջ 162)։

Դերբայական դարձվածի կազմում կարող են հանդես գալ, իհարկե, նաև անվանական, գոյականական լրացումներ (որոշիչ, հատկացուցիչ, բացահայտիչ), բայց նրանք սովորաբար դերբայի հետ չեն կապվում, այլ նրա լրացումների՝ ենթակայի, խնդիրների և պարագաների։ «Երգ էր կարծես արևը հին՝ իրիկնային լույսով վառված...». (ԵՋԸԵ, էջ 19)։ «.... և հանձն առնել այդպիսի ամորալի գործ...» (ԸՍ, էջ 17)։ «Որ հով սարերի սովորած նանը էլ սար չի գնա առանց Սարոյի...» (ՀԹԸԵ, էջ 204)։ «...Սև շորեր հագած կնստի տանը...» (ՀԹԸԵ, էջ 204)։ Այս դարձվածների մեջ իրիկնային, ամորալի, հով, սև որոշիչները վերաբերվում են դերբայի լրացումներ լույսով, գործ, սարերի, շորեր խնդիրներին և չեն կապվում վառված, հանձն առնել, սովորած, հագած դերբայների հետ։ Հատկացուցիչները նույնպես դերբայական դարձվածի կազմում հանդես են գալիս որպես դերբայի լրացումների լրացումներ և չեն կարող անմիջապես կապվել դերբայի հետ։

«Մեկը իմ սիրտը փշրելով անցավ....» (ՎՏԵԺ, հ. 1-ին, էջ 29)։ «....նրան դուր էր գալիս իր աղջկա ընտրած ուղամարդը» (ՎԽՄՄՀ, էջ 362)։ «....ոմանք էլ խոսում էին պատերազմի դաշտից եկող լուրերի մասին» (ԱԲՍՋ, էջ 11)։ «Երբ Անտոնինա Իվանովնան աղախնի խոսքերից զրկված մի ակնթարթ նայեց Սրմբատին, նկատեց նրա դեմքի վրա խիստ փոփոխություն» (ՇՔ, էջ 345)։ Հաճախ որոշիչներն ու հատկացուցիչները հանդես են գալիս միասին՝ որպես դերբայի միևնույն լրացման լրացումներ։ «Վանելով Ռոջ հուսահատ ճիչը, ցնցվեց, արձակեց խուլ հառաչանք և ընկղմվեց աթոռի վրա ուժասպառ» (ՇՔ, էջ 333)։ «Բոլորը ծիծաղեցին, բայց տեսնելով Գեղեոնի զարհուրելի դեմքը՝ մի կերպ հազիվ դսպեցին իրենց» (ԴԴՎ, էջ 396)։ «Եվ վաշտն է անցնում քայլերով անփույթ Ուրքած արևի կենսատու բոցով» (ԵՋԸԵ, էջ 211)։ «Ու հպա՜րտ եմ ես, հպա՜րտ է ու խենթ Քո կարմիր հրով լցված իմ հոգին» (ԵՋԸԵ, էջ 24)։ Անվանական, գոյականական լրացումներից միայն որոշիչը կարող է վերաբերվել դերբային, այն էլ շատ հազվադեպ, միայն այնպիսի դեպքերում, երբ գոյականաբար հան-

դեմ եկող դերբայը հիմնականում առարկայական իմաստ է արտահայտում, երբ նրա բայական հատկանիշները տվյալ դեպքում մթագնված են։ «—Նա կգա, նրան կրերի այն սարսափելի սպանվածը» (ԴԴԸՊ, էջ 222)։ «Նա կմտածե, որ աքսորյալ թագավոր ունի և կթափե յուր բարկությունը անիրավ աքսորողի վրա» (ԸՍ, էջ 208)։ «Եկա՞ր, հաղթանակի մայիս, եկա՞ր.... Ես հավատում էի քո մեծ գալուն» (ՆՋՀԸ, էջ 99)։ «Նա համաձայն է բոլոր ասածներին» (ԴԴԸՊ, էջ 55)։ Այս նախադասությունների մեջ գոյականաբար գործածված դերբայները (սպանվածը, աքսորողի, գալուն, ասածներին) առաջին հերթին դիտվում են հենց որպես գոյական՝ անձնավորություն, առարկա և այդ պատճառով էլ որոշիչ են վերցվել. ինչպիսի՞, ո՞ր սպանվածը և ոչ թե ինչպե՞ս սպանվածը, ինչպիսի՞ աքսորողը, ինչպիսի՞ գալուն (գալուստին), ո՞ր ասածներին։ Բայց այսպիսի դարձվածները միշտ չէ, որ հարթ են հնչում (օրինակ, Ես հավատում էի քո մեծ գալուն — անհարթ է), բացի դրանից այդպիսի որոշիչները կարող են ըմբռնվել նաև որպես ձևի պարագա (անիրավ աքսորող՝ կարող է ըմբռնվել որպես անիրավորեն աքսորող և այլն)։ Որ սովորական պայմաններում (երբ դերբայի բայական հատկանիշները մթագնված չեն) գոյականաբար հանդես եկած դերբայը չի կարող որոշիչ ունենալ, շատ պարզ երևում է այն դեպքերում, երբ փորձում ենք բայական լրացումներ ունեցող դերբային որևէ ածական լրացում տալ։ «...և միայն սրահում նստածները դեռ բորբոքում էին իրենց մտքերը» (ԴԴՄՄ էջ 4)։ «Լդ նոր ավարտածները բոլորն սկզբում բոթբոթացնում են այդպես» (ՎՓԸԵ, էջ 573)։ Սրահում հանգիստ նստածները, էդ նոր լավ ավարտածները — պարզ է, որ մեր ավելացրած ածական լրացումները (հանգիստ, լավ) ըմբռնվում են որպես ձևի պարագա և ոչ թե որպես որոշիչ։ Իսկ եթե տվյալ ածականը հարմար չլինի ձևի պարագայի իմաստ արտահայտելու համար, ապա նախադասությունը խիստ անհարթ կստացվի, այսինքն՝ դերբայը այդպիսի ածական լրացում չի կարող վերցնել ասենք՝ սրահում երիտասարդ նստածները։

Եթե գոյականաբար հանդես եկող դերբայը երբեմն կարող է որոշիչ ունենալ, ապա հատկացուցիչ դրեթե չի կարող ունենալ։ Սեռական հոլովը դերբայի հետ կարող է կապվել միայն որպես կողմնակի ենթակա. իմ գրածը, նրա սովորելը, աղջկա հեռանալը, մոմի այրվելը, մոր մտնելը, թանաքի թափվելը, երեխայի կոտրածը, և այլն։ Գործողությունը կարող է պատկանել միայն այդ գործողության կատարողին. գործողության հետ կապված պատկանելիության այլ հարաբերություն հնարավոր չէ. այդ պատճառով էլ հատկացուցչի առկայությունն արդեն (որպես դերբայի լրացում) դերբայի բայական էության ժխտումն է։ Միայն որոշ դեպքերում սեռական հոլովով լրացումը դերբայի հետ կարող է կապվել որպես կողմնակի ուղիղ խնդիր՝ գրի տպագրելը, սենյակի մաքրելը և այլն, բայց այսպիսի կապակցություններ նախ շատ քիչ են պատահում (դերբայի փոխարեն այսպիսի դեպքերում բայանուն է գործածվում՝ գրքի տպագրությունը, սենյակի մաքրումը), այնուհետև դրանք հնարավոր են միայն դերբայի ներգործական սեռի լինելու դեպքում։

Սեռական հոլովը որպես հատկացուցիչ կարող է կապվել միայն լրիվ գոյականացած, տվյալ դեպքում արդեն որպես գոյական ըմբռնվող դերբայների հետ. իմ ծնողները, նրա ուսանողները, գրադարանի ընթերցողները և այն։ Բայց բավական է, որ դրանք ըմբռնվեն որպես դերբայ (որևէ բայական լրացում առնեն), որպեսզի հատկացուցչի առկայությունն այնտեղ անհնարին դառ-

նա, ասենք՝ փիլիսոփայություն ուսանողները, երեխա ծնողները, գիրք ընթերցողները (չենք կարող ասել՝ նրա փիլիսոփայություն ուսանողները եկան)։

Այսպիսով, դերբայական դարձվածի կազմում դերբայն ունենում է հիմնականում միայն բայական լրացումներ, այն է՝ խնդիրներ և պարագաներ (նաև ենթակա), որոնք կոչվում են նախադասության կողմնակի անդամներ, իսկ այդ կողմնակի անդամները՝ հիմնականում միայն գոյականական լրացումներ, այն է՝ որոշիչ, հատկացուցիչ (նաև բացահայտիչ), որոնք նախադասության սովորական անդամներ են (ոչ կողմնակի)։ Առաջին հայացքից կարող է տարօրինակ թվալ, որ դերբայական դարձվածի՝ անմիջապես դերբային լրացնող անդամները նախադասության համար կողմնակի են, իսկ այդ կողմնակի անդամների լրացումները՝ ոչ։ Բայց այստեղ կարևորը ստորադասության աստիճանը չէ։ Ինչպես վերը նշվեց, ենթական, խնդիրները ու պարագաները նախադասության մեջ կարող են վերաբերվել հիմնականում միայն բային կամ դերբային, այսինքն՝ կապված են նախադասության հիմնական կամ երկրորդական գործողության հետ և դրան համապատասխան էլ լինում են նախադասության բուն կամ կողմնակի անդամներ։ Եթե որոշիչ, հատկացուցիչ ու բացահայտիչ ունենար միայն ենթական, իսկ դերբայական դարձվածի մեջ էլ միայն կողմնակի ենթական, գուցե նրանք էլ (այդ կողմնակի ենթակային լրացնողները) որևէ սերմինով տարբերակվեին բուն ենթակայի լրացումներից։ Բայց քանի որ որոշիչ, հատկացուցիչ ու բացահայտիչ կարող է ունենալ ոչ միայն ենթական, այլև խնդիրները ու գոյականով արտահայտված պարագաները (ինչպես ստորոգյալի, այնպես էլ դերբայի), ապա անհրաժեշտություն չի զգացվում դերբայական դարձվածի մեջ հանդես եկող որոշիչը, հատկացուցիչն ու բացահայտիչն առանձնացնելու, տարբերակելու նախադասության մեջ հանդես եկողներից։ Այնուհետև, բուն նախադասության և դերբայական դարձվածի մեջ հանդես եկող որոշիչների, հատկացուցիչների ու բացահայտիչների միջև տարբերություն չկա. նրանք միշտ էլ նույն կերպ են կատարում իրենց ֆունկցիան՝ լինեն նախադասության ենթակայի, թե կողմնակի անդամի լրացում։ Իսկ, օրինակ, կողմնակի ենթակայի ու իսկական ենթակայի միջև մեծ տարբերություն կա. կողմնակի ենթական նախադասության ոչ թե հիմնական, գլխավոր գործողության կատարողն է, այլ երկրորդական, կողմնակի և մեծ մասամբ դրված է լինում սեռական հոլովով։

Վերևի շարադրանքից պարզ է դառնում, որ դերբայական դարձվածի անդամ և նախադասության կողմնակի անդամ տերմինները նույնական չեն։ «Նա միայն գոհ էր, որ Դուրգենին վիրավորիչ խոսք ասողը պատժված էր իր ձեռքով» (ԴԴԸՊ, էջ 123)։ Այս դարձվածի մեջ Դուրգենին և խոսք բառերը անմիջապես լրացնում են դերբային, խնդիրներ են և նախադասության կողմնակի անդամներ, իսկ վիրավորիչ բառը խոսք–ի որոշիչն է և, թեև նախադասության կողմնակի անդամ չէ, բայց կողմնակի անդամների հետ հավասարապես մտնում է դերբայական դարձվածի մեջ, նրա անդամն է։ Ուրեմն, դերբայական դարձվածի կազմի մեջ, բացի դերբայից և նախադասության կողմնակի անդամներից, մտնում են նաև այդ կողմնակի անդամների լրացումները, ընդ որում վերջիններս թեև պակաս կարևոր նշանակություն ունեն դերբայական դարձվածի իմաստային ու կառուցվածքային ամբողջականության համար, բայց օգնում են նրա արտահայտած մտքի բացահայտմանը։ Իսկ այժմ անցնենք բուն կողմնակի անդամների բնությանը։

* * *

Կողմնակի ենթական նախադասության որևէ անդամի պաշտոնով հանդես եկող դերբայի գործողության կատարողն է։ «Այդ պատճառով էլ **ռառասի ասածներր** *չեմ թարգմնում նրանից» (ՍՋՄԿՊ, էջ 375)։ «Բայց մի օր զղջումի կսկիծով թե դառնաս* **Ռո անցած** *ճամփեքով» (ՎՏԵԺ, հ. 1-ին, էջ 409)։ «Ժամ առ ժամ սպասում էին* **Նրա մեռնելուն**» *(ՇՔ, էջ 383)։* «**Ու կռիվր չդադարած,** *սովը եկավ համատարած» (ՀԹԵԺ, հ. 1-ին, էջ 333)։ «Դու մի ասիլ* **ճարբած ճարսանֆավորների տարածած** *լուրը սրանց էլ է լինում հասած» (ՀԹԸԵ, էջ 426)։*

Անկախ դերբայի կատարած շարահյուսական պաշտոնից, նրա արտահայտած գործողության համար միշտ մի որևէ կատարող է ենթադրվում, բայց միշտ չէ, որ դերբայի գործողության կատարողը դերբայական դարձվածի կազմում հանդես է գալիս որպես կողմնակի ենթակա։

Հաճախ նախադասության և դերբայական դարձվածի ենթակաները համընկնում են. այդպիսի դեպքերում դերբայական դարձվածը մեծ մասամբ կողմնակի ենթակա չի ունենում։ «Սաթոն **Կոտայքի շրջանից Երևան գալով** *վարձվեց մի սովետական ծառայողի ընտանիքում տան աշխատակից» (ԴԴԸՊ, էջ 110)։ «***Թերևակի լսելով** *մի քանի խմբերի՝ մենք կանգ ենք առնում վերջապես մի խմբի մոտ....» (ՍՋՄԿՊ, էջ 302)։ «Սևիկ Մարգարիտը վազեց* **Սոնայի ծնողներին յուր տալու**» *(ՇԵԼԺ, հ. 2-րդ, էջ 503)։ «Մարիամի* **Նշմարելի կերպով Նիհարած** *այտերը կարմրեցին» (ՇԵԼԺ, հ. 2-րդ, էջ 263)։ «Եվ Ալեքսանի սիրտը* **թև առած՝** *ուզում էր թռչել գնդակի հեքով ու տուն սլանալ իրենից առաջ» (ՆՋՀԸ, էջ 147)։ Այսպիսի դեպքերում դերբայական դարձվածը կողմնակի ենթակա է ունենում միայն այն ժամանակ, երբ նրա բացակայությունը կարող է շփոթության տեղիք տալ։ «Ինչու ելնեմ ես* **իմ տնկած** *այգուց» (ՆՋՀԸ, էջ 75)։ «Ու գնում եմ ես* **ունայն** *տրտունջով՝* **իմ սիրած** *մարդկանց, իմ լավ հույսերի գերեզմանների շարքերի միջով» (ՀԹԸԵ, էջ 41)։ «Չէ՞ որ նա երբեք չի զգում* **իր ընկնելը**» *(ՇԵԼԺ, հ. 2-րդ, էջ 560)։ «Ինչ որ կարող է խոստանալ շահը, Երկրակալ շահը* **իր սիրած** *կնկան» (ՀԹԸԵ, էջ 262)։*

Դերբայի արտահայտած գործողության կատարողը կարող է լինել ոչ միայն նախադասության ենթական, այլև նախադասության որևէ այլ անդամ. այդպիսի դեպքերում նույնպես դերբայը կողմնակի ենթակա չի ունենում։ «Նա միշտ համոզում էր Միքայելին **դատ բանալ եղբոր դեմ**» *(ՇՔ, էջ 329)։ «Ռայոնական կոմիտեն չհարգեց* **Երևան տեղափոխվելու** *նրա ցանկությունը» (ՆՋՀ, էջ 10)։ «Երկրի* **աղջիկների խելքը** *գնում էր* **Նրան տեսնելիս**» *(ՓՎԸԵ, էջ 223)։ «Իսկ ես տեսել եմ* **Թոլոյին** *Ղանթարի տակ* **ոսկե ժամացույց գնելիս**» *(ՆՋՊՊ, էջ 500)։*

Կողմնակի ենթական կարող է չդրսևորվել նաև այնպիսի դեպքերում, երբ նրան պարզապես կարևորություն չի տրվում։

«Իսկ ապրանքը **գոմերի առաջ կապոտած** *բառաչում էր սարի կանաչ խոտի համար» (ԱԲԵ, էջ 33)։ «Նախարարը պոկեց* **պատին հենած** *երկար նիզակը և փայտի մասով սկսեց ուժեղ հարված հասցնել...» (ԴԴՄՄ, էջ 8)։*

Դերբայական դարձվածը կողմնակի ենթակա չի ունենում նաև այն դեպքերում, երբ դերբայի գործողությունն ընդհանուր բնույթ է կրում, երբ գործողության որևէ կոնկրետ կատարող չի ենթադրվում։ «**Լավ մարդու դեմ մեղք գոր-**

ծելը այնքան հեշտ չէ, որքան բռնակալի կամ դավաճանողի դեմ» (ՇԵԼԺ, հ. 3-րդ, էջ 385)։ «Կարծես Արամը մարդ տալու աղջիկ լիներ» (ՆԶՊՊ, էջ 331)։

Եվ վերջապես դերբայական դարձվածը կողմնակի ենթակա չի ունենում, եթե կազմված է ենթակայական կամ անկատար դերբայներով։ Ենթակայական դերբայի գործողության կատարողի գաղափարն արդեն դերբայի մեջ առկա է։ «Հեռվից նայողը կկարծեր, թե Իվան բեյը հարբած էր» (ԱՐԵ, էջ 399)։ «Նրա ճամբավն իմացողները զարմանում էին տեսնելով թե....» (ՇԹՆԾ, էջ 374)։ «Զնայելով. որ լսում էր վարժապետի խոսքերը, բայց և զննում էր ներս մտնող-ներին» (ՎՓԸԵ, էջ 112)։ «.....ամեն հանդիպողի պատմում էր նորածնի՝ իր հրաշալի թոռնիկի մասին» (ՇԹՄ, էջ 51)։ «....որ դիշատիչ հայացքով սուր նա-յեց նկողներին (ԴԴՄՄ, էջ 11)։ Նայողը՝ նա, որ նայում է, իմացողները՝ նրանք, որոնք իմանում են, ներս մտնողները, նրանք որոնք ներս մտան, ամեն հանդիպողի՝ ամեն հանդիպող մարդու, եկողներին՝ եկող մարդկանց։ Երբեմն միայն գոյականաբար հանդես եկող ենթակայական դերբայի գործողության կատարողի ով կամ ինչ լինելը բացատրվում է բաղադրյալ ստորոգյալի ստո-րոգելիական վերադրի միջոցով։ «Նրան դիմողը իրենց ցեխի վարիչն էր» (ՇԹՄ, էջ 46)։ «Դուռը բացողը բարձրահասակ չոր-չոր կին էր, մազաղաթե դեմքին փայլող կենդանի, սուր աչքերով» (ԱՄՔ, էջ 89)։ «Ի՞նչ պիտի անեք Ձեր պառավ մորը, Ձեր եղբոր երկու փոքրիկ որբերին, որոնց պահողն ու կերակրողը դուք եք միայն» (ՆԴՄ)։

Իսկ երբ ենթակայական դերբայը նախադասության մեջ հանդես է գալիս ածականաբար՝ որոշիչի պաշտոնով, ապա նրա մեջ արդեն առկա գործողու-թյան կատարողի գաղափարը կոնկրետանում, մասնավորվում է նրա որոշյալի միջոցով. «Ինձ և ինձ շրջապատող մ ա ր դ կ ա ն ց միջև և ոչ մի առնչություն չէի տեսնում» (ՆԴՄ, էջ 191)։ «Միրտս մեռնում է, լեռնագագաթներ, ներհնում նիր-հող դ ա շ տ ե ր ո ւ մ խռնավ» (ՎՏԵԺ, հ. 1-ին, էջ 53)։ «....ու արշավեց դնաց կողով առաջ գնացող գրգի հետևից» (ՍԶՊԹ, էջ 293)։

Անկատար դերբայով դրսևորվող գործողությունը միշտ ենթադրում է մի ուրիշ միաժամանակ կատարվող գործողություն (տուն գնալիս, պարզ է, որ մի ուրիշ բան էլ է կատարվել) և մեծ մասամբ այդ երկուսի կատարողը նույնն է լինում։ «Երբեք Հաճի աղան այդպես անխնամ չէր փոխել քայլերը իրենց տնից խանութ գնալիս» (ԴԴԸՊ, էջ 24)։ «Որևէ աշակերտի վրա բարկանալիս՝ նա մա-տով ցույց է տալիս այդ խողը և ասում» (ՍԶՄԿՊ, էջ 107)։ «Նրա մասին մտա-ծելիս Սամվելը հիշում էր լուսաբացը» (ՇԹՆԾ, էջ 393)։ «Մի անգամ խանութից տուն վերադառնալիս՝ փողոցի մթության մեջ հանդիպեց մի ծանոթ թուրքի» (ՇՔ, էջ 225)։ «Գյուղացու մասին խոսելիս գրական լեզուն համեմում էր գեղջ-կական բառերով....» (ՆԴՄ, էջ 86)։

Երբեմն, սակայն, անկատար դերբայի գործողության կատարողը կարող է նույնը չլինել գլխավոր գործողության ենթակայի հետ. նա նախադասության մեջ կարող է կատարել որևէ այլ անդամի՝ մեծ մասամբ խնդրի պաշտոն, կամ կարող է չդրսևորվել. «Տեսե՞լ ես ծերուկ ժայռերի միջով կատղած անցնելիս գետը փրփրած» (ՀԹԵԺ, հ. 1-ին, էջ 160)։ «...եթե երազում չտեսներ նրան «Տրտունջք» արտասանելիս,....» (ՆԶՊՊ, էջ 284)։ «...մի առավոտ հանկարծ մտավ Երեմիայի կացարանը և տեսավ նրան խորասուզված աշխատելիս» (ՍԶՊԹ, էջ 305)։ «Բայց երբ հանկարծ միտն է գալիս, որ գլխաբաց երգ ասե-լիս՝ իր կեսուրը բացեց դուռը...» (ՀԹԸԽ, էջ 100)։

Նախադասության կողմնակի անդամներից հիմնականում միայն ենթական է, որ բուն ենթակայից կարող է տարբերվել նաև ձևով, իսկ մյուսները սովորաբար ձևով չեն տարբերվում նախադասության բուն անդամներից։

Կողմնակի ենթական մեծ մասամբ դրվում է սեռական հոլովով, բայց պետք է նկատի ունենալ հետևյալը։ Դերանվամբ արտահայտված կողմնակի ենթական գրեթե միշտ դրվում է սեռական հոլովով։ «Եվ նա կգա, պոետն այգ մեծ, մեր երազած պոետը նոր....» (ԵՁԸԵ, էջ 182)։ «Հիշո՞ւմ եք իմ կրած վիրավորանքները և ստորացումները» (ՇՔ, էջ 394)։ «Նրա արձակած տեգը խոլական թշնամու հոգում ցցվել է ահեղ» (ԱԻԵ, էջ 143)։ «Չէ՞ Մու արածն ով մոռանա, իր աստվածն էլ նա կուրանա...», (ՀԹԵժ, հ. 1-ին, էջ 270)։ «Մի վայրկյան նա խորհեց, որ իր արածը լավ բան չէ» (ՇՔ, էջ 64)։ Միայն երբեմն, շատ հազվադեպ պատահում են ուղղական հոլովաձև ունեցող դերանուն կողմնակի ենթակաների օրինակներ. դա լինում է այն դեպքերում, երբ նախադասության հոգնակի ենթական դերբայական դարձվածի կազմում թվարկվում է առանձին-առանձին։ «Էսպիսով՝ նրանք մանդելով, ես տեղս փոխելով՝ հասանք վերջին կոնդին» (ՀԹԸԵ, էջ 302)։ «Երկար տարիներ իրարից բաժան, հեռու կողմերում, դու ինձ մոռացած, ես քեզ հիշելով կյանք էինք մաշում» (ՎՏԵժ, հ. 1-ին, էջ 144)։

Գոյականով արտահայտված կողմնակի ենթական կարող է դրվել և ուղղական հոլովով, և սեռական, երբեմն նույնիսկ հնարավոր է, որ միևնույն կողմնակի ենթական արտահայտվի երկու ձևովն էլ՝ թե ուղղական, թե սեռական։ «Տղամարդ կասեմ, թե մինչև արևի մայր մտնելը ցանկապատն էլ կարջի բերիր» (ԱՍՔ, էջ 38)։ «Այդ խելացի անասունը, կարծես, նախասենյակում սպասում էր դոնների բացվելուն» (ԲՍ, էջ 20)։ Այստեղ գոյական կողմնակի ենթակաները դրված են սեռական հոլովով, բայց կարող են դրվել և ուղղական հոլովով՝ մինչև արևը մայր մտնելը, սպասում էր դոները բացվելուն։ Երբեմն էլ ուղղական հոլովաձև ունեցող կողմնակի ենթական կարող է արտահայտվել նաև սեռական հոլովով։ «Ուստի համբերությունիս որ հատավ, վճռեցի էլ չսպասեմ ամիսը վերջանալուն և գնամ» (ՆԴԵժ, հ. 2-րդ, էջ 550)։ Կարելի է նաև ամսի վերջանալուն։

Բայց միշտ չէ, որ հնարավոր է՝ առանց նախադասության մտքի աղավաղման, սեռական հոլովով դրված կողմնակի ենթական արտահայտել ուղղական հոլովով կամ ընդհակառակը։ «Անախորժ տպավորություն գործեց Շահյանի վրա մոր անժամանակ ներս մտնելը» (ՆԴՄ, էջ 38)։ «Մանավանդ որ հարկ կար սպասել Արտակի գալուն» (ԴԴվ, էջ 505)։ Պարզ է, որ չի կարելի ասել մայրը անժամանակ ներս մտնելը կամ՝ Արտակը գալուն։ Նույնպես և միշտ չէ, որ կարելի է ուղղական հոլովով դրված կողմնակի ենթական արտահայտել սեռական հոլովով։ «Լաց,— և արցունքդ դեռ չցամաքած գուցե կծեծե մահը, նալելիս» (ԱԻեժ, հ. 1-ին, էջ 204)։ «Նիհար, ճիպ մարդ էր, փորը մեջքին կպած, բայց նիզակի պես ճկուն» (ԴԴԸՊ, էջ 64)։

Նախադասության մյուս կողմնակի անդամները գրեթե միշտ նույն ձևն ունեն. դրվում են նույն հոլովով, կապվում նույն կապերով, ինչ որ համապատասխան բուն անդամները։ Երբեմն միայն, շատ հազվադեպ, նրանցից մի քանիսն էլ կարող են ձևով տարբերվել համապատասխան բուն անդամից։ Պատահում են սեռական հոլովաձև ունեցող կողմնակի ուղիղ խնդրի օրինակներ, բայց դրական լեզվի նորմաներով նախընտրելին հայցական հոլովով ձևն է։ «Վայ Մու դեսը ղրկողի վիզը կոտրի...» (ՀԹԸԵ, էջ 416)։ «... ինքը, միայն ինքը

եղավ այդ սարսափելի պատկերի ստեղծողը՝ (ԴԴԸՊ, էջ 45)։ Ավելի նախընտրելի են՝ քեղ գեսը ղրկողի, պատկերը ստեղծող ձևերը։

Սեռական հոլովով կողմնակի ուղիղ խնդիրը սեռական հոլովաձև ունենալու հետևանքով, երբեմն կարող է ըմբռնվել որպես հատկացուցիչ դերբայի համար, բայց այդպիսի դեպքերում, ինչպես իր տեղում նշվել է, դերբայն անպայման վերցված է լինում գոյականաբար և արտահայտում է հիմնականում առարկայական իմաստ. քաղաքի կառուցողը, այս ապրանքի պահանջողները և այլն։

Իսկ սովորաբար կողմնակի ուղիղ խնդիրը հանդես է գալիս հայցական հոլովով՝ որոշյալ կամ անորոշ առումով։ «Սիրտ կեղեմող կարոտ անանց, ուրիշ ոչինչ» (ՎՏԵԺ, հ. 1-ին, էջ 368)։ «Որպես ոսոխ տեսած մի վիթխարի հովազ» (ԵՁԸԵ, էջ 160)։ «Մոռանալով վտանգը, աղջիկը ցած իջավ ցանկապատից ու մոտեցավ նրան» (ԱՄՄ, էջ 269)։ «Առանց այն էլ այդ կանայք հոգով-սրտով հակառակ էին հացրուխի աղջկան ուզելուն և...» (ՇԱԼԺ, հ. 2-րդ, էջ 546)։

Կողմնակի անուղղակի խնդիրները նույնպես, ինչպես սովորական անուղղակի խնդիրները, միշտ հանդես են գալիս համապատասխան հոլովներով։ Կողմնակի հանգման անուղղակի խնդիրը դրսևորվում է տրական հոլովով՝ որոշյալ կամ անորոշ առումով։ «Աղջիկը բոբիկ ոտքերը մեկնել էր արևի տակ և չէր հագենում ջրին նայելուց» (ԱԲԵ, էջ 657)։ «Երբ ոսոխի հանդիպած պիտի կռվես ակամա» (ԵՁԸԵ, էջ 152)։ «...այն, որ աշխատում էր ավելի մոտենալ Անանիտին» (ՍՁՄԿՊ, էջ 277)։

Կողմնակի անջատման անուղղակի խնդիրը դրվում է բացառական հոլովով։ «Խորը Մնից սարափվածի նման արմունկները քաշեց պատշգամբի ճաղերից, իրանն ուղղեց և նայեց ետ» (ՇԵԼԺ, հ. 1-ին, էջ 25)։ «Դատաստանից վախածներ նրա մոտ էին ծածկվում,....» (ՀԹԸԵ, էջ 34)։ «Մեխակն էլ իր հերթին հնարում էր երանցից բաժանվելու մի պատճառ....» (ՆՁՊՊ, էջ 183)։

Կողմնակի միջոցի անուղղակի խնդիրը նույնպես, սովորական միջոցի անուղղակի խնդրի նման, միշտ հանդես է գալիս գործիական հոլովով։ «Եվ գլխի վերև կանգնած էր մահը՝ վիրխարի բիկունֆով արևը ծածկած...» (ԱԻԵ, էջ 303)։ «Է՜, թող ուրեմն սթափվի, տեսնելով բացված աչքերով մերկ իրականությունը» (ՇՔ, էջ 371)։ «Ամենամեծ դժբախտությունն ինձ համար այն օրը կլինի, երբ ես դադարեմ սրտով մտածելուց» (ՆԴՄ, էջ133)։

Երբեմն գործիական հոլովով հանդես եկող կողմնակի միջոցի անուղղակի խնդիրը (ինչպես նաև սովորական միջոցի անուղղակի խնդիրը) կարող է ըմբռնվել որպես ներգործող խնդիր, եթե կրավորական սեռի դերբայի գործողության բուն կատարողը հենց ինքն է կամ էլ գործողության այլ կատարող չի ենթադրվում։ «.....տեսնում է արևով ողողված սառցադաշտը, վաղում...» (ԱԲԵ, էջ 571)։ «Բայց նրա աչքերը, երիզված խիտ թարթիչներով, ժպտում էին» (ՆՁՀ, էջ 132)։ «Լեռներ, նեռշնչված դարձյալ ձնզանով, թնդում է հոգիս աշխուժով լցված...» (ՀԹԸԵ, էջ 5)։ Հասկանալի է, որ՝ օրինակ ողողված դերբայի համար, բացի արևից, գործողության այլ կատարող չի կարող լինել, որևէ մեկը չի կարող արևով ողողել սառցադաշտը, թարթիչներով երիզել աչքերը կամ լեռներով ներշնչել պոետին, ուրեմն՝ արևն է ողողել սառցադաշտը, թարթիչներն են երիզել աչքերը, լեռներն են ներշնչել պոետին։

Կողմնակի պարագաները նույնպես ձևով չեն տարբերվում բուն պարագաներից։ Կողմնակի տեղի պարագան ամենից հաճախ դրսևորվում է ներգոյական հոլովով. «Ու փողոցում բերբեր ծախող փոքրիկ տղան,....» (ԵՁԸԵ, էջ 140)։

Այսպիսի տեղի պարագան երբեմն կարող է ունենալ պատճառայնության երանգ. «Դու անմութ աշխարհում ես ապրում, հիշիր դու խ ա վ ա ր ո ւ մ տանջվողին» (ՎՏեժ, հ. 1-ին, էջ 15)։ Այստեղ խավարում տեղի պարագան տանջվելու գործողության ոչ միայն տեղն է ցույց տալիս, այլև որոշ իմաստով նաև պատճառը՝ խավարից տանջվողին։

Կողմնակի տեղի պարագան սովորական տեղի պարագայի նման կարող է հանդես գալ նաև տրական, հայցական, բացառական և գործիական հոլովներով։ «Բազմած լուսնի նուրբ շ ո ղ ե ր ի ն...» (ՀԹեժ, հ. 2-րդ, էջ 45)։ «Տ ա ն ը նըստելով բան չի դառնալ» (ՆԴՄ, էջ 167)։ «Հ ր ա պ ա ր ա կ ի ց անցնելիս. նկատեցի, թե ինչպես...» (ՎՓԸԵ, էջ 122)։ «Ծառերի տակով պաղ առու է հոսում, գյուղի փ ո ղ ո ց ն ե ր ով անցնելիս ադտոտվում և ներքին չիմաններում ճահճանում» (ԱԲԵ, էջ 24)։ Կողմնակի տեղի պարագան կարող է դրսևորվել նաև որպես տարբեր կապերի խնդիր։ «Բայց նա պատճառ ուներ մենավոր ծ ա ռ ի տակ չերևալու» (ԳԲՆ, էջ 53)։ «Մինչ գուսանները մի տախտի վրա տեղավորվելով, նայում էին տան խեղճությանը...» (ՄՁՊԹ, էջ 20)։ «Դույլի մեջ թափվող ջուրը կարծես բյուրեղների մի շիթ էր...» (ՇԹՄ, էջ 90)։

Կողմնակի ձևի պարագան կարող է արտահայտվել ինչպես մակբայով (շատ հաճախ), այնպես էլ ածականով, գոյականով և դերանվամբ։

Մակբայով. «Մի ստվեր անցավ ծաղիկ ու կանաչ մեղմիվ շոյելով» (ՎՏեժ, հ. 1-ին, էջ 55)։ «Ծանր երկնքի տ ա ղ տ կ ո ր ե ն լացող անձրևների տակ....» (ՎՏեժ, հ. 1-ին, էջ 147)։ «Բարակ, ա ն ր ն դ հ ա տ մաղող աշնանային անձրևը ավելացնում էր մեր սրտնեղությունը...» (ՇԹՄ, էջ 12)։ «Տերևներիդ դանդաղ բափվող ոսկով, մետաքսներով քնքշաշրշյուն» (ՎՏեժ, հ. 1-ին, էջ 228)։ «....և որի հետ բախտ պիտի ունենանք շ ո ւ տ-շ ո ւ տ հանդիպելու» (ՊՊՀԽ, էջ 30)։ «Իվան բեյը ա ր ա գ վազելուց քրտնել էր» (ԱԲԵ, էջ 406)։

Ածականով. «Նա ուրախացավ հորն ա ր ծ ո ւ ն տեսնելով» (ՇԵԼԺ, հ. 2-րդ, էջ 517)։ «Ճերմակ գլուխը ապա բարձրացրեց, հոնքերի տակից ա զ դ ու նայելով.....» (ՀԹեժ, հ. 2-րդ, էջ 35)։ «Եկել էին պիոներներն իրենց թմբուկներով, ն ե ր մ ա կ հագնված ու գլխարաց» (ՍՁՍՔ, էջ 83)։

Գոյականով. «Սկուտեղը հ ա ր զ ա ն ֆ ո վ դնելով տախտի վրա.- հյուրերի առաջ՝ նա կրկին դուրս գնաց» (ՍՁՊԹ, էջ 21)։ «Բնական և խորհ ր ա խ ծ ո ւ թ յ ա մ ր արտասանված պարզ բողոքը հանկարծ սթափեցրեց մոլորված կնոջը» (ՇԵԼԺ, հ. 2-րդ, էջ 113)։

Դոյականով և կապով. «— Սիսալ է,— զրնգաց հանկարծ մի արծաթահընչուն ձայն՝ դ ա ն ա կ ի պ ե ս կտրելով հոետորի մտքերը» (ՆՁՀ, էջ 71)։ «Եվ դու ոսկի մի աշուն, ա շ ն ա ն մ ր զ ի պ ե ս հասած...» (ԵՁԸԵ, էջ 156)։

Դերանվամբ. «Դու ամեն վայրկյան քեզ ժխտում ես ու այդպես ժխտելով հաստատում» (ԵՁԸԵ, էջ 169)։ «Հարցրեց նրան թե ինչ թղթեր են, գլուխն օրորեց ու, ի ր ե ն-ի ր ե ն խոսելով դուրս գնաց» (ԱԲՍՁ, էջ 40—41)։

Կողմնակի ժամանակի պարագան արտահայտվում է որևէ ժամանակ ցույց տվող բառով (մակբայով կամ գոյականով)։ «Եվ հանեցի երգերս մ ի ե ր ե կ ո գրած» (ԵՁԸԵ, էջ 183)։ «Կավերի գոմում սատկել էր ե ր ե ք օ ր ա ռ ա ջ ծնված հորթը» (ՆՁՀ, էջ 115)։ «Այդ վայրկյանից սկսեցին սպասել նաև հ ե ն ց ն ո ր գնացած դինվորների վերադարձին» (ՍՁՊԹ, էջ 579)։ «Այժմ՝ որպես վ ա ղ ո ւց մնոած բարեկամի հիշատակ կամ մ ա ն կ ո ւ թ յ ա ն օ ր ով սիրած մի հին երգի եղանակ» (ՀԹեժ, հ. 1-ին, էջ 100)։

Կողմնակի պատճառի պարագան արտահայտվում է որևէ գոյականի կամ գոյականաբար հանդես եկած ածականի բացառական հոլովով։ «Արթնանում է գիշերվա քնից զվարթացած քաղաքը» (ՎԽՄՄՀ, էջ 365)։ «Ոտաբոբիկ, պատառոտուն հագուստով, խճճված մազերով մի փոքրիկ աղջիկ դուռը բաց արավ և ցրտից սարսռալով, մի կողմ քաշվեց, որ հայրը ներս մտնի» (ՆԴՆԼԺ, հ. 3-րդ, էջ 51)։ «Նստակյաց, գլխաքարշ, աշխատանքից ու կյանքի բեռից կորացած մեջքով՝ նա երբեմն գնում էր շուկա» (ԱԻՆ, էջ 185)։ «Լևոնը ոգևորությունից շողշողացող պրակտիկանտուհու ձեռքից բռնած քարշ տվեց դեպի իր կինը.....» (ՆՋՀ, էջ 8)։ «Առավոտյան տասնմեկ ժամն էր, երբ Սամսոնը բաց արավ անքնությունից ուռած ու կարմրած աչքերը» (ՇՆԼԺ, հ. 3-րդ, էջ 409)։

Կողմնակի պատճառի պարագան սովորաբար լրացնում է չեզոք (կամ կրավորակերպ չեզոք) սեռի դերբայներին, բայց նա կարող է որպես լրացում հանդես գալ նաև ներգործական սեռի դերբայների համար։ «Ներքին հուզմունքից շրթունքները կրծոտելով, նա լուսանկարը տվեց ուրիշներին» (ՇՆԼԺ, հ. 2-րդ, էջ 441)։ «Անհուն վշտից խելքը կորցրած՝ նա շտապում էր մի սենյակից մյուս սենյակ,....» (ՇՆԼԺ, հ. 2-րդ, էջ 498)։ «Պախրեն անցավ էն սարից՝ ծորից հանած չոր լեզուն» (ՀԹՆԺ, հ. 1-ին, էջ 106)։

Բացառական հոլովով կողմնակի պատճառի պարագա չեն կարող ունենալ միայն կրավորական սեռի դերբայները՝ քանի որ բացառական հոլովով է դրվում նրանց ներգործող խնդիրը։ «Ես մի չարագործ եմ, աստծուց և մարդկանցից անիծված...» (ՄԳՄ, էջ 293)։ «Ես իսկույն, ինչպես հալածված քաջքից, փախա խմբագրից ու իրեն աչքից՝ (ՀԹՆԺ, հ. 2-րդ, էջ 96)։

Իսկ կողմնակի ներգործող խնդիրն ու կողմնակի պատճառի պարագան միաժամանակ չեն կարող լրացնել կրավորական սեռի դերբային. չենք կարող ասել չարագործությունից (չարագործության պատճառով) աստծուց և մարդկանցից անիծված եմ և այլն։

Երբ կրավորակերպ դերբայի բացառական հոլովով լրացումը ըմբռնվում է որպես պատճառի պարագա, ապա դերբայն անպայման ըմբռնվում է չեզոք իմաստով (կրավորակերպ չեզոք)։ «Աղջիկը, խոր ոգևորությունից հուզված, աշխատում էր որսալ նրա հայացքը» (ՇՆԼԺ, հ. 1-ին, էջ 437)։ «Եղբոր վարմունքից փոքր ինչ շփոթված՝ Գևորգն արագ սթափվեց» (ԱՍՔ, էջ 5)։ «Իսկ Շահյանը սաստիկ նեղվելով իր դրությունից, շուտ շուտ նայում էր դռան կողմը....» (ՆԴՄ, էջ 62)։

Որպես դերբայի լրացում կարող է հանդես գալ նաև նպատակի պարագան։ Կողմնակի նպատակի պարագան դրվում է տրական հոլովով։ «Անցավ սրտից նա քո այս պայքարի ժամին՝ որպես երթի ելած ցասման թափոր» (ԵՉԸՆ, էջ 180)։ «Փողոցներով արդեն անցնում էին մշակներն ու արհեստավորները շտապելով գործի....» (ՇՔ, էջ 94)։ Դերբայական դարձվածի կազմում հանդես եկող պարագաներից կարելի է նշել նաև չափի ու միասնության պարագաները։ «Շատ թափառելուց թփերն ու փշերը հագի շորերը տանում են,...» (ՀԹԸՆ, էջ 124)։ «Ես համաձայն եմ ձեզ հետ պայքարելու,....» (ԱԻՆ, էջ 388)։

Նախադասության կողմնակի անդամները՝ դերբայով արտահայտված գործողության ենթական, խնդիրներն ու պարագաները դերբայական դարձվածի բուն անդամներն են։ Եվ քանի որ, բացի նախադասության կողմնակի անդամներից, դերբայական դարձվածի մեջ կարող են մտնել և որոշիչներ, հատկացու-

ցիչներ ու բացահայտիչներ, ուրեմն՝ դերբայական դարձվածը իր կազմում կարող է ունենալ նախադասության գրեթե բոլոր անդամները (բացի ստորոգյալից)։

Պետք է նշել, որ կողմնակի անդամները նախադասության համար կողմնակի են միայն ձևական, քերականական տեսակետից, իսկ նախադասության մտքի դրսևորման ու բացահայտման մեջ նրանք մեծ մասամբ ունեն իրենց ոչ պակաս կարևոր դերը։ Նրանք նույնպես անհրաժեշտ են նախադասության մտքի ճիշտ ըմբռնման համար, ինչպես և նախադասության մյուս՝ ոչ կողմնակի, այլ երկրորդական անդամները. «Կուզեի առանց մեր սովորական երեկոյան տեսակցությանը սպասելու, այսօր այդ մասին խոսել քեզ հետ ուսումնարանում» (ՆԴՄ, էջ 102)։ Այս դերբայական դարձվածից եթե թողնենք միայն դերբայն իր կապով, իսկ մյուս անդամները հանենք, կստացվի՝ կուզեի առանց սպասելու, այսօր այդ մասին խոսել քեզ հետ ուսումնարանում։ Ճիշտ !, նախադասության միտքը ընդհանուր առմամբ չի խաթարվում, բայց և իր էությամբ չի բացահայտվում։ Դերբայական դարձվածի հանված մասից մենք իմանում ենք, որ նրանք ամեն օր երեկոյան հանդիպում էին և ենթական առանց այդ հանդիպմանը սպասելու է ուզում խոսել նրա հետ, այսինքն՝ այսօր բառն այստեղ ունի ցերեկով իմաստը։ Իսկ դարձվածի այդ մասը հանելուց հետո այնպես է ստացվում, որ նա ուզում է հանդիպել այսօր, ոչ թե վաղը կամ մյուս օրը։ Ուրեմն դարձվածի, բացի դերբայից, մյուս անդամների հեռացումը սովորաբար թեև չի աղճատում նախադասության միտքը, բայց նեղացնում է նախադասության իմաստային ընդգրկման սահմանները։

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Հովհաննես Թումանյան — Ընտիր երկեր, 1953 թ. (ՀԹԸԵ)
   — Երկերի ժողովածու (ՀԹԵԺ)
2. Ավետիք Իսահակյան — Երկեր, 1955 թ. (ԱԻԵ)
   — Երկերի ժողովածու, 1950 թ. (ԱԻԵԺ)
3. Վահան Տերյան — Երկերի ժողովածու, 1950 թ. (ՎՏԵԺ)
4. Եղիշե Չարենց — Ընտիր երկեր, 1955 թ. (ԵՉԸԵ)
5. Ակսել Բակունց — Երկեր, 1955 թ. (ԱԲԵ)
   — Սպիտակ ձին, 1929 թ. (ԱԲՍՁ)
6. Դերենիկ Դեմիրճյան — Վարդանանք, 1954 թ. (ԴԴՎ)
   — Էստիր պատմվածքներ, 1950 թ. (ԴԴԷՊ)
   — Մեսրոպ Մաշտոց—Սովետական գրականություն, 1956 թ. 11
7. Շիրվանզադե — Բառոս, 1944 թ. (ՇԲ)
   Երկերի լիակատար ժողովածու, 1950 թ. (ՇԵԼԺ)
8. Նար-Դոս — Մահը, 1946 թ. (ՆԴՄ)
   Երկերի լիակատար ժողովածու, 1955 թ. (ՆԴԵԼԺ)
9. Բաֆֆի — Սամվել, 1910 թ. (ԲՍ)
10. Մուրացան — Գևորգ Մարզպետունի, 1939 թ. (ՄԳՄ)
11. Պերճ Պռոշյան — Հացի խնդիր, 1939 թ. (ՊՊՀԽ)
12. Ստեփան Զորյան — Մի կյանքի պատմություն, 1955 թ. (ՍԶՄԿՊ)
   Պապ թագավոր, 1944 թ. (ՍԶՊԹ)

13. Նաիրի Զարյան — Հացավան 1955 թ. (ՆԶՀ)
Հատընտիր, 1951 թ. (ՆԶՀՐ)
Պարոն Պետրոսն ու իր նախարարները, 1958 թ. (ՆԶՊՊ)

14. Վրթանես Փափազյան — Ընտիր երկեր, 1951 թ. (ՎՓԸՆ)

15. Շահեն Թաթիկյան — Նրա ճանապարհը, 1956 թ. (ՇԹՆՃ)
Մարդիկ, 1955 թ. (ՇԹՄ)

16. Անահիտ Սահինյան — Մարավ, 1955 թ. (ԱՍՄ)

17. Անժելա Ստեփանյան — Քույրեր, 1947 թ. (ԱՍՔ)